ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/194

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-43/19» ծածկագրով գնանշման հարցում, ՀԱԷԿ ՓԲԸ պահուստային թողարկման ԴՀԲՐ 20/13 տեսակի №2 և №3 շոգեկաթսաների փոխարինման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-43/19»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.11.2019թ. թիվ 26/26-1/18292-2019 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 01.11.2019թ. թիվ Ե/40/2755-19 գրության հիման վրա, 06.11.2019թ. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 06.11.2019թ.-ի և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ ու 12.11.2019թ.-ին և 28.11.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 28.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.12.2019թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 01.11.2019թ. թիվ Ե/40/2755-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-43/19» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում, «ՀԱԷԿ» ՓԲԸ պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի № 2 և № 3 շոգեկաթսաների փոխարինման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման նպատակով, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 01.08.2019թ. կնքվել է թիվ 03/45 պայմանագիրը, որի համաձայն ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից 30 օրացույցային օր:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի խնդրանքով 30.08.2019թ. կազմվել է 01.08.2019թ. թիվ 03/45 պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագիր և ծառայության մատուցման ժամկետը երկարացվել է մինչև 09.09.2019թ.: Այդ ընթացքում «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը մեկ անգամ այցելել է «ՀԱԷԿ» ՓԲԸ, տեղում կատարվող աշխատանքներին ծանոթանալու նպատակով ս/թ սեպտեմբերի 9-ին «Սարգիս և

Մարիաննա» ՍՊԸ-ն ներկայացրել է իր կողմից կազմված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, որոնք փոխանցվել են պատվիրատու արտադրամաս հրավերով և պայմանագրով սահմանված պահանջների համապատասխանության ստուգման նպատակով: Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ծավալուն լինելու պատճառով, պատվիրատու արտադրամասի ղեկավարը 17.09.2019թ. թիվ 5619 զեկուցագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենին հայտնել է, որ ներկայացված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը չեն համապատասխանում արտադրամասի կողմից ներկայացված տեխնիկական պահանջներին :

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն խոստացել է սեղմ ժամկետում շտկել թերությունները և ներկայացնել նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ճշգրտված տարբերակը :

26.09.2019թ. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն ներկայացրել է «ՀԱԷԿ» ՓԲԸ պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի № 2 և № 3 շոգեկաթսաների փոխարինման աշխատանքների նախագծա- նախահաշվային փաստաթղթերի նոր տարբերակը, որը նույնպես փոխանցվել է պատվիրատու արտադրամաս՝ սահմանված պահանջների համապատասխանության ստուգման նպատակով:

21.10.2019թ. թիվ 6280 ծառայողական գրությամբ մանրամասն ներկայացվում են նախագծի անհամապատասխանությունները հրավերի պահանջներին, որի հիման վրա «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 22.10.2019թ. թիվ Ε/33/2687-19 գրությամբ տեղեկացվում է «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին պայմանագիրը միակողմանի լուծելու որոշման մասին:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-43/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.11.2019թ. գրությամբ դիմել է «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2019թ. թիվ 26/26-1/18292-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ ներկայանալով նաև նիստերին:

Ներկայացված դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևայլը.

«2019թ. օգոստոսի 1-ին «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև Ընկերություն) և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Պատվիրատու) միջև կնքվել է ԴԿԲՐ 20/13 տեսակի 2 և 3 շոգեկաթսաների փոխարինման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-43/19 ծածկագրով պայմանագիր (այսուհետ նան Պայմանագիր):

www.gnumner.am համացանցային կայքում 06.11.2019թ. հրապարակված «Չկայացած գնման ընթացակարգի մասին հայտարարության» բաժին մուտք գործելով տեղեկանում ենք, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 01.08.2019թ. կնքված ԴԿԲՐ 20/13 տեսակի 2 և 3 շոգեկաթսաների փոխարինման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-43/19» ծածկագրով պայմանագիրը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է չկայացած և միակողմանի լուծվել է, քանի որ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին և էականորեն խախտվել է պայմանագրի նշված կետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-իև մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սաանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կայմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-Ի միջև 01.08.2019թ. կնքված՝ ԴԿԲՐ 20/13 տեսակի 2 և 3 շոգեկաթսաների փոխարինման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությանների ձեռքբերման «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-43/19» ծածկագրով պայմանագիրը, որը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է, քանի որ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին և էականորեն խախտվել է պայմանագրի նշված կետը:

Համաձայն պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա. մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի հավելված 1-ով սահմանված պահանջներին,

բ. խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Նույն պայմանագրի 7.9 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Գտնում ենք, որ «Սարգիս ր Մարիաննա» ՍՊԸ-ն թույլ չի տվել Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում և վերջինիս չպետք է ներառվի Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հետևյալ հիմնավորմամբ.

ա) «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-43/19» ծածկագրով պայմանագիրը կնքվել է 2019թ. օգոստոսի 1-ին և վերջնաժամկետ, սահմանվել 2019թ. սեպտեմբերի 9-ը:

09.09.2019թ. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն առձեռն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին է հանձնել վերը նշված օբյեկտի նախագծահաշվային փաստաթղթերը: Փաստաթղթերի քննարկման արդյունքում չի արձանագրվել որևէ անհամապատասխանություն այլ ընդամենը Ընկերությանը առաջարկվել է ներկայացնել ևս 1 տարբերակ նախահաշիվ առանց շոգեկաթսաների արժեքների, որը Ընկերության կողմից նույնպես ներկայացվել է արդեն էլ. փոստի միջոցով /համապատասխան ապացույցը կցվում է/:

Այնուհետև, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի մասնագետների առաջարկի հիման վրա 26.10.2019թ. ներկայացվել է ևս 1 տարբերակ նախահաշիվ առանց կաթսաների, սարքավորումների և նյութերի արժեքների, սակայն քանի որ առձեռն ներկայացված փաստաթղթերի համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին հանձնելու փաստը հավաստող որևէ փաստաթուղթ չի տրամադրվել Ընկերության կողմից որոշում է կայացվել արձանագրությունը, Պայմանագրի կամ դրա մի

մասի կատարման արդյունքերի հանձնման-ընդունման և ակտ 1-ի փաստաթղթերը առաքել «ՀԱՅՓՈՍՏԻ» միջոցով /համապատասխան ապացույցը կցվում է/:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև մեկ այլ կարևոր հանգամանքի վրա, այն է՝ Պայմանագրի 3.1-րդ կետի համաձայն մատուցված ծառայությունը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր հավալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի 3.2-րդ կետի համաձայն եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված յոթ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 3.3-րդ կետի համաձայն եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Եվ վերջապես, ամենակարևորը, Պայմանագրի 3.4-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձին տեղեկացնում ենք, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն տեսնելով, որ Պատվիրատուի կողմից չկա որևէ պատասխան՝ ներկայացված աշխատանքի վերաբերյալ, ավելին, Պատվիրատուն ցանկություն չունի փաստաթղթերն առձեռն վերցնելու կատարված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը հանձնելու վերաբերյալ հավաստում որոշում է կայացնում ոչ միայն ներկայացնել առձեռն, այլ նաև այն ուղարկել փոստային ծառայության միջոցով:

Իսկ արդեն 2019թ. սեպտեմբերի 26-ին Ընկերությունը էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Պատվիրատուին է տրամադրել իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3) /համապատասխան ապացույցը կցվում է/:

Պատվիրատուն Պայմանագրի 3.2 կետով սահմանված յոթ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ոչ ստորագրել, ոչ էլ Կատարողին հետ է վերադարձրել հանձնման-ընդունման արձանագրությունը դրանում նշելով չստորագրելու համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Այնինչ Պայմանագրի 3.3-րդ կետի համաձայն եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Եվ մինևույն ժամանակ, ինչպես նշվել է, Պայմանագրի 3.4-րդ կետի համաձայն եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված:

Վերը նշված փաստական հանգամանքի հետ կապված իր տեսակետն է հայտնել նաև ՀՀ ֆինանսների նախարարությունը իր 07.05.2019թ. գրությամբ /կցվում է/, մասնավորապես նշելով հետևյալը. «Վերոհիշյալ պայմանագրի «Ծառայության հանձնման և ընդունման կարգը» 3-րդ բաժնով նախատեսված կարգավորումների համաձայն եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և այն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և

դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Եվ եթե վերոհիշյալ ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և նշված ժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը: Հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում ենք, որ պայմանագրի արդունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ երկկողմ հաստատված փաստաթղթի բացակայության պարագայում դեպարտամենտը պետք է վերոնշյալ ժամկետում հետ վերադարձներ նշված փաստաթղթերը: Հայտնում ենք նաև, որ պայմանագրով հստակ սահմանված չեն եղել, թե ինչպես է իրականացվելու հանձնման-ընդունման գործընթացը, մասնավորապես, յուրաքանչյուր մատուցված ծառայությունից հետո, թե պայմանագրով սահմանված ծառայություններն ամբողջ ծավալով մատուցելուց հետո: Նշվածով պայմանավորված գտնում ենք, որ այս պայմանների ոչ հստակ սահմանումը նույնպես կարող էր հիմք հանդիսանալ հանձնման-ընդունման գործընթացի տարաբնույթ մեկնաբանման համար»:

Վերը նշված պարզաբանումը ներառվել է նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիպաևի կողմից կայացրած ՍՅ-ՆԳ-2019/17 ծածկագրով ընթացակարգի որոշման մեջ, որի արդյունքում ՍՅ-ՆԳ-2019/17 ծածկագրով ընթացակարգը մերժվել է և Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն չի ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՍՅ-ՆԳ-2019/17 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ Գ. Ներսիսյանը մասնավորապես արձանագրել է Պայմանագրի 3.4-րդ ենթակետի համաձայն եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը: Այսպիսով համաձայն Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից ներկայացված armeps համակարգի համապատասխան էջի բացվածքի, Ա/Ձ-ի կողմից 27.09.2019թ. armeps էլեկտրոնային համակարգ է մուտք արվել Պայմանագրի արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունը, որը սակայն ՀՀ դատական դեպարտամենտի կողմից չի ընդունվել կամ չի մերժվել: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն

ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուսումնասիրելով գործում առկա նյութերը, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Պատվիրատուն 20.07.2018թ. թիվ ԴԴ-Յ-Ե-5592 գրությամբ Ա/Ձ Գրիգոր Այվազյանին թղթային եղանակով վերադարձրել է վերջինիս կողմից ներկայացված հարկային հաշիվը, հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը հավաստելու վերաբերյալ ակտը, այնուամենայնիվ Պայմանագրի 3-րդ կետով նախատեսված ծառայության հանձնման և ընդունման կարգը սահմանող 3-րդ կետը հստակ նախատեսում է, որ եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հահձնման-ըեդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը, որը սակայն տեղի չի ունեցել: Նման պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից իր և ՀՀ դատական դեպարտամենտի միջև 13.04.2018թ. կնքված «ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01-2» ծածկագրով պայմանագրի էական խախտման փաստը, հետևաբար նաև Ա/Ձ ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1 ին մասի 6 րդ կետի «ա» ենթակետի խախտման փաստը: Ուստի գտնում եմ, որ Ա/Ձ Գրիգոր Այվազյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակումներառելու հիմքեր առկաչեն:

բ) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է Պայմանագրի 7.9 կետի համաձայն Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Հայտնում ենք, որ մինչ օրս www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները» բաժնում առկա չէ Պայմանագիրը լուծելու մասին որևէ հրապարակում, որի հաջորդող օրվանից հետո Կատարողը՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ կհամարվի պատշաճ ծանուցված, ինչն էլ նախատեսված էր «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-43/19» ծածկագրով պայմանագրի 7.9 կետով /համապատասխան ապացույցը կցվում է/:

Այսպիսով, գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել նաև Պայմանագրի 7.9 կետի և Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի դրույթներով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները /պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ/:

Վերը նշված հիմնավորումը ներառվել է նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից կայացրած ՍՅ-ԼՕ-2019/180 ծածկագրով ընթացակարգի որոշման մեջ, որի արդյունքում ՍՅ-ԼՕ-2019/180 ծածկագրով ընթացակարգը մերժվել է և «Գրիտիգ» ՍՊԸ-ն չի ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2019/194 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 01.08.2019թ.-ին կնքվել է թիվ 03/45 պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-43/19» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում, «ՀԱԷԿ» ՓԲԸ պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի № 2 և № 3 շոգեկաթսաների փոխարինման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման նպատակով, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 01.08.2019թ. կնքված թիվ 03/45 պայմանագիրքի համաձայն ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից 30 օրացույցային օր:

30.08.2019թ. կազմվել է 01.08.2019թ. թիվ 03/45 պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագիր և ծառայության մատուցման ժամկետը երկարացվել է մինչև 09.09.2019թ.:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է պայմանագիրը, հիմք ընդունելով 01 օգոստոսի 2019թ.-ին կնքված թիվ 03/45 պայմանագրի 2-րդ կետի 2.3.1 ենթակետի ա) պարբերության պահանջները և որ մատուցված ծառայությունը չի համապատասխանել պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին և էականորեն խախտվել է պայմանագրի նշված կետը:

www.gnumner.am համացանցային կայքում պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցում «**Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ**» բաժնում չի հրապարակվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2019թ. թիվ 26/26-1/18292-2019 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կատարողը ստանձնում է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի №2 և №3 շոգեկաթսաների փոխարինման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայամանագիրը խախտելը էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանձներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար

պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 01.08.2019թ.-ին կնքված թիվ 03/45 ծածկագրով պետական գնման պայմանագիրը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Մասնակցի կողմից թույլ տված խախտումները, Պայմանագրի 2-րդ կետի 2.3.1 ենթակետի ա) պարբերության դրույթների հիման վրա:

Սակայն www.gnumner.am համացանցային կայքում պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցում «**Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ**» բաժնում չի հրապարակվել:

Պայմանագրի 7.9 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ կողմերի միջև 01.08.2019թ.-ին կնքված թիվ 03/45 ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանիորեն լուծման մասին ծանուցումը Հանձնաժողովի կողմից տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում չի հրապարակվել:

Այն դեպքում, երբ Պայմանագրի 7.9-րդ կետի դրույթների հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Պայմանագրի 7.9 կետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված (ծանուցումը ստացված), ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները, այն է՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ուստի, նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2019թ. թիվ 26/26-1/18292-2019 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/194 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**